

եւ մերձաւորաց՝ աշխարհաժողով եւ մեծաշուք հանդիսի՝ ի մայրաքաղաքն Տարսնի, յաւուր տօնի Գալստեան Հոգւոյն սրբոյ (ի14 յունիսի 1226 ամի), օծին ձեռամբ կաթողիկոսին Կոստանդեայ՝ թագաւոր Հայոց, եւ պսակեցին ընդ Զապելի։- Սա թէպէտ ՚ի սկզբանն ՚ի սրտի ունելով զանձուկ առաջնոյ փեսային, կամ մանաւանդ սաղրեալ ՚ի մօրէ իւրմէ, պոստելով հայեր ՚ի մանուկն Հեթում, այլ ապա հանգեալ ՚ ինա կաթողի, եւ ընծայեաց ծիրանածին ուստերս երիս եւ դստերս հինգ։

Յայնմհետէ Կոստանդին իբրեւ Թագաւորահայր, որպէս եւ էրն իսկ եւ յատկաբար կոչեցաւ, այլ եւ Աւագ Պարոն, ինսամէր յանձանձէր զբովանդակ թագաւորութիւնն, խորհրդով եւ զինու զօրութեամբ, ցորչափ, բաւէին բազուկքն կրել զպատերազմական գործիսն, ցամա քառասուն, բաժանելով յերիցագոյն որդիսն՝ զմեծամեծ ինսամս պետութեանն. զառաջինն (Սմբատ) փոխանակ իւր Գունդստապլ (սպարապետ) կացոյց, որ եւ զամս յիսուն վարեաց արիաբար զկարեւորագոյնն այն գործ պաշտաման, (յերկարակեաց քան զայլ եղբարսն եղեալ, եւ գրեաթէ՝ ի մարտի նահատակեալ յամի 1276, առ թագաւորութեամբ եղբօրորդւոյ իւրոյ Լեւոնի Բ^Ի).- զերկրորդն՝ Բարսեղ՝ նուիրեաց եկեղեցւոյ պաշտաման, ՚ ի զերագոյն ամբարձեալ զահ եպիսկոպոսաց, տալով նմա զառաջնորդութիւն Դրագարկու վանաց՝ զոր ունէրն հանգուցեալ կաթողիկոսն Յովհաննէս, եւ հարկ է թէ ընդ նմին եւ զարքեպիսկոպոսութիւն Ստյ, որպէս եւ կոչի յաճախ արքեպիսկոպոս՝ թէ եւ ոչ յիշի անուն աթոռոյն.- զերրորդ որդին՝ Լեւոն՝ կացոյց Մարաջախտ, այլ եւ Իշխանաց իշխան անուանեալ.- չորրորդին՝ որ Օշին կոչէր՝ ետ զպատիւ կամ զանուն Պայլութեան, եւ ժառանգեցոյց նմա զԿոռիկոս, զոր կապտեալ էր յապստամբէն Վահրամայ. յետոյ եւ կրսերագունիցն որդւոց՝ ՚ իզարգանալ տիոցն՝ ետ ըստ իւրաքանչիւր պատշաճի. բայց զպատիւ Թագադրութեան շնորհեաց Կոստանդինի՝ որդւոյ Հեթմոյ-Հեղեայ, դարձուցեալ ՚ ինա եւ զԼամբրուն դղեակ, կամելով ՚ իմոռացօնս արկանել զնախնեացն հակառակութիւն եւ զօրավիգն ունել զնա տան իւրոյ եւ արքունեաց. զի այր կորովի էր եւ նա՝ զօրութեամբ եւ զիտութեամբ, եւ ծանօթ աւագաց՝ ազգայնոց եւ օտարաց, եւ սահմանաւ մերձաւոր սուլտանին Իկոնիոնի, ընդ որում կարէր միաբանել եւ նեղել զտուն թագաւորին, որպէս եւ արարն իսկ յետոյ։ Իսկ ինքն Կոստանդին՝ որպէս ծառ մի մեծ բազմաստեղն եւ լայնատարած՝ ՚ իմիջի նորատունն ծառոց,